ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՐԱՄԱՆ

23 օգոստոսի 2017 թվականի N 136-Ա

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N1400-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կանոնադրության 12-րդ կետի դ) ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ

1. Հավանություն տալ ծրագրային բյուջետավորման համատեքստում վերանայված ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2017թ. ---------- ------

Երևան

Հավելված

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների
նախարարության ջրային
տնտեսության պետական կոմիտեի
նախագահի 2017թ.-ի օգոստոսի -----ի
թիվ ---- -Ա հրամանի

Ծրագրային բյուջետավորման համատեքստում վերանայված ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարություն

(համաձայն Ծրագրային բյուջետավորման պահանջների համատեքստում ոլորտային ռազմավարությունների մշակման մեթոդական ուղեցույցների)

Օգտագործված հապավումներ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱՏ	Ակտիվների տրամադրում
ԵԱ	Ելակետային արժեք
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ԾԲ	Ծրագրային բյուջետավորում
ՀԶԾ	Հեռանկարային զարգացման ծրագիր
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀԿՑ	Հիմնական կատարողական ցուցանիշներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
մլն	Միլիոն
մլրդ	Միլիարդ
ՆԳՍ	Նորմալ գործող ստանդարտ
ՇԱՊ	Շահագործում և պահպանում
ՈԵՋ	Ոչ-եկամտաբեր ջուր
ՉՋ	Չհաշվառվող ջուր
ՊՏ	Պայմանագրային տարի
ՋՀ	Ջրահեռացում
ՋՄ	Ջրամատակարարում
ՋԱՋ	Ջրամատակարարում և ջրահեռացում
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացնաբ եվրոպական բանկ
ՎԿՄ	Վատ կատարողական մակարդակ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՕ	Տեխնիկական օժանդակություն

1. *Ներածություն*

Սույն ռազմավարությունը մշակվել է համաձայն Ոլորտային ռազմավարությունների մշակման մեթոդական ցուցումների (ծրագրային բյուջետավորման համատեքստում)՝ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. հունիսի 23-ի թիվ 311-Ա հրամանով (Հավելված 6):

Վերջինս հանդիսանում է ԾԲ ամբողջական ներդրմանն ուղղված միջոցառումների շարքում ՀՀ-ում ռազմավարական պլանավորման գործընթացի բարելավման քայլերից մեկը, մասնավորապես՝ համապատասխանեցնելով դրանք ԾԲ հիմնական պահանջներին:

Ծրագրային բյուջետավորման համակարգը, որպես արդյունքին ուղղված բյուջետավորման համակարգի տեսակ, զգալի շեշտադում է անում հատկապես քաղաքականություն-բյուջե կապի ապահովման վրա և, այդ առումով, ԾԲ համակարգը սերտորեն փոխկապակցված է ռազմավարական պլանավորման համակարգի հետ:

ԾԲ պայմաններում բյուջետային ծրագիրը սահմանվում է որպես միևնույն նպատակին կամ վերջնական արդյունքին միտված պետության միջամտությունների (միջոցառումների) տրամաբանական խմբավորում, հետևաբար, ԾԲ պայմաններում բյուջետային ծրագրերն առավել մոտ են կանգնած ոլորտային ռազմավարություններին և ըստ էության, յուրատեսակ կապող օղակ են հանդիսանում պլանավորման և բյուջետավորման համակարգերի միջև:

Այս իմաստով, սույն ռազմավարությունը վերաբերում է ՀՀ կառավարության 29.12.2016թ. թիվ 1313-Ն որոշման Հավելված 11-ի Աղյուսակ 12-ում ներկայացված «1072 Աջակցություն խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններին» ծրագրին (ԾԲ դասակարգման համաձայն):

Ի լրումն, ոլորտի հիմնական խնդիրների բացահայտման և դրանց լուծման առումով սույն ռազմավարությունը հիմնվում է 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ծրագրի[1] ՋևՋ ոլորտին վերաբերող դրույթների և ՀՀ կառավարության 2015 թ. օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրային որոշմամբ հաստատված «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարություն և ֆինանսավորման ծրագրի» վրա:

[1] ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի թիվ 442-Ն որոշման Հավելված

2. *Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում առկա իրավիճակի վերլուծությունը*

2.1. Նախորդ պլանային ժամանակահատվածում ոլորտում իրականացված ծրագրերի/միջոցառումների արդյունքների վերլուծություն

Սկսած 2001 թվականից ՀՀ կառավարությունը իրականացնում է ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի բարեփոխումներ: Ընդունվել է ՀՀ ջրային օրենսգիրք (2002թ.): Այնուհետև, ՀՀ կառավարությունը ջրամատակարարման մասնավոր օպերատորների հետ կնքեց կառավարման, իսկ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ վարձակալության պայմանագրեր և իրականացրեց խոշոր ներդրումներ ջրամատակարարման ենթակառուցվածքների բարելավման համար: Մինչև 2017թ. Հայաստանի Հանրապետությունում գործում էին հինգ ջրամատակարար կազմակերպություններ՝ «Երևան Ջուր» ՓԲԸ՝ վարձակալության պայմանագիր Veolia ընկերության հետ, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ՝ կառավարման պայմանագիր SAUR ընկերության հետ, տարածաշրջանային ջրամատակարար ընկերություններ՝ «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ներ՝ կառավարման պայմանագիր ԷՄՎԻՎի Դեկոն, ԷՄՎԻՎի Էներջի, ԷյԻՋի սերվիզ ընկերություններից կազմված կոնսորցիումի հետ, SAUR ընկերության գլխավորությամբ (սկսած 2014թ. հունվարի 1-ից): Ընդ որում, մոտ 600 համայնքներ[2] չէին սպասարկվում նշված հինգ ընկերություններից որևէ մեկի կողմից, այլ ունեին ջրային համակարգերի կառավարման կազմակերպական այլ պայմանավորվածություններ:

Ջրային տնտեսության ոլորտում անցած տարիների ընթացքում բազմաթիվ խնդիրներ են լուծվել, այնուհանդերձ, 2015-2016թթ. դրությամբ (մինչև միասնական վարձակալի ներգրավումը և նրա կողմից ՋևՋ ծառայությունների մատուցումը) ոլորտում առկա էին հետևյալ խնդիրները.

- Սակագները ցածր էին[3], և բերում են 5 ջրամատակարար ընկերություններից 4-ի ոչ համարժեք ֆինանսական կենսունակության և

[2] 579 համայնք՝ համաձայն ՀՀ կառավարության 2015թ. օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրային որոշմամբ հաստատված «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարության և ֆինանսավորման ծրագրի»

[3] Ըստ էության, բոլոր 5 ընկերությունների համար սակագները էապես ցածր էին ամբողջական ծախսածածկման մակարդակից, սակայն նշված 4-ի դեպքում դրանք նույնիսկ «ընթացիկ» ծախսածածկում չէին ապահովում: Մինչդեռ, «Երևան ջուր» ՓԲԸ դեպքում սակագինը հիմնականում ապահով էր ընթացիկ ծախսածածկում, ինչպես նաև Ընդլայնված պահպանման և նորոգման աշխատանքների որոշակի ծավալ: Բոլոր ընկերությունների դեպքում էլ խոշոր կապիտալ ծախսերը ֆինանսավորվում էին պետական (մեծամասամբ՝ վարկային) միջոցների հաշվին, ինչը կշարունակվի նաև առնվազն հետագա 15 տարիների ընթացքում:

բավարար չեն ոլորտի հետագա ներդրումային կարիքները հոգալու համար:

- ՋևՋ ոլորտի համար ՀՀ կառավարության անհրաժեշտ ֆինանսական (ընթացիկ) աջակցությունը արդյունքում տարեցտարի աճում էր և կրում շարունակական բնույթ՝ օպերատորների պակասորդը և պարտքի սպասարկման աճող ծախսերը ծածկելու համար:
- 579 «չսպասարկվող» համայնքներն ունեն սպասարկման ցածր որակ և մեծ ներդրումային կարիքներ:
- Նախկինում ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտները չեն դիտարկվել որպես առաջնահերթության խնդիրներ:

2.2. Ոլորտի զարգացման հիմնահարցերը, հիմնական խնդիրները և բացթողումները

Համաձայն ՀՀ կառավարության 14.08.2014թ. թիվ 883-Ն և 888-Ն որոշումների՝ 5 ջրամատակարար ընկերությունների կողմից օգտագործվող և պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը 2017թ. հունվարի 1-ից վարձակալությամբ փոխանցվել է մեկ կառավարչի՝ 15 տարի ժամկետով: Վարձակալը ՋևՋ ծառայություններ է մատուցում նախկին 5 ՋևՋ ընկերությունների սպասարկման տարածքում և իրավունք ունի գանձելու ՀԾԿՀ կողից սահմանված ՋևՋ ծառայությունների մատուցման (միասնական սպասարկման ամբողջ տարածքում) սակագինը, որը 2017թ. հունվարի 1-ից սահմանվել է 180 դրամ՝ ներառյալ ԱԱՀ (153 դրամ՝ ջրամատակարարման և 27 դրամ՝ ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների համար): Չսպասարկվող 579 համայնքները ևս հնարավորություն ունեն հետագայում միանալ Վարձակալի կողմից սպասարկվող տարածքներին:

Ինչպես նշվեց, սույն ռազմավարության նպատակներով ոլորտի հիմնական պրոբլեմների բացահայտումը հիմնվում է «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարություն և ֆինանսավորման ծրագրի» վրա: Մասնավորապես, վերոհիշյալ ռազմավարությունը մատնանշում է, որ.

1) Ջրամատակարարման համար անհրաժեշտ ծախսերի մեծ մասը գոյություն ունեցող գույքի վերակառուցման համար է, որը քայքայվել է անբավարար պահպանման և սպասարկման պատճառով: Վերջինս, իր հերթին, մասամբ պայմանավորված է այդ նպատակով օպերատորներին հասանելի ֆինանսական

միջոցների սղությամբ, քանի որ հաստատված սակագները չեն ապահովել նույնիսկ ՇԵՊ ծախսածածկումը:

2) Կարիքները և ֆինանսական ռեսուրսների ճեղքվածքն ավելի բարձր են «չսպասարկվող» համայնքների դեպքում, որոնք կարող են չֆինանսավորվել և ավելի քիչ ուշադրության արժանանալու ռիսկ ունենալ, եթե ջրամատակարարման ներդրումային ծախսերը շարունակեն գերակշռել:
3) Ներդրումային կարիքների մասով ուսումնասիրությունների գնահատականները զգալիորեն գերազանցում են ջրային ոլորտի համար ՀՀ կառավարության կողմից տրամադրվող հնարավոր ֆինանսական միջոցները:

2.3. Ֆինանսական ռեսուրսները՝ ոլորտին հատկացված ռեսուրսների մասնաբաժինը ընդհանուր բյուջետային հատկացումներում

Ստորև բերվող աղյուսակը ներկայացնում է խմելու ջրի մատակարարման ոլորտում 2014-2025թթ. ՀԶԾ-ով նախատեսված պետական ներդրումների կանխատեսումները, ինչպես նաև 2014-2017թթ. փաստացի և պլանավորվող ծախսերի ծավալները այդ ոլորտում:

Աղյուսակ 1. ՀԶԾ-ով նախատեսված ՋևՋ ոլորտի ֆինանսավորման և փաստացի ֆինանսավորման համեմատություն

		2014	2015[4]	2016[5]	2017	2021	2025
Համաձայն ՀԶԾ-ի	Համախառն ներքին արդյունք, մլրդ դրամ	4,700			6,232	9,350	14,045
	Խմելու ջրի մատակարարման ոլորտում պետական ներդրումների մակարդակ, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	0.4			0.4	0.4	0.4
	Խմելու ջրի մատակարարման ոլորտում պետական ներդրումների կանխատեսում, մլրդ դրամ	18.8			24.9	37.4	56.2
Փաստացի (2017թ. համար՝ պլանային)	Խմելու ջրի մատակարարման ոլորտում պետական ծախսերը, փաստացի, մլրդ դրամ,	25.5	20.1	10.9	4.8		
	Խմելու ջրի մատակարարման ոլորտում պետական ներդրումները, փաստացի, մլրդ դրամ,	22.2	14.0	3.5	4.8		

3. *<u>Ոլորտի զարգացման ռազմավարական ուղղությունները</u>*

Համաձայն 2014-2025թթ. ՀԶԾ՝ խմելու ջրի համակարգերի բարեփոխումները նպատակ են հետապնդում բարձրացնել համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը և բարելավելու ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը՝ ուշադրության կենտրոնում պահելով տարածքային անհամաչափությունների մեղմման խնդիրը: Ծրագրի ողջ ժամանակահատվածի համար համակարգում տարեկան ներդրումների մակարդակը

[4] ՀԶԾ տվյալներ չի պարունակում 2015թ. համար:
[5] ՀԶԾ տվյալներ չի պարունակում 2016թ. համար:

կկազմի ՀՆԱ-ի 0.4%-ը:

Ինչպես նշվեց, ոլորտում պահանջվող ծախսերի կամ ներդրումների գերակշիռ մասն անհրաժեշտ է գոյություն ունեցող ենթակառուցվածքների վերականգնման կամ հիմնանորոգման համար:

3.1. Ոլորտային գերակայությունները

Առաջնահերթությունների սահմանման մասով ՀՀ կառավարության մոտեցումը կլինի հետևյալը.

1. Կենտրոնանալ գույքի հետագա մաշվածությունից խուսափելու հարցի լուծման վրա, որպեսզի կանխվի հետագա վերակառուցման ծախսերի անհրաժեշտությունը (այսինքն՝ ապահովել, որ սակագներից ստացվող եկամուտն ավելի մեծ լինի, քան ՇևՊ ծախսերը, ինչպես նաև ապահովել պատշաճ սպասարկում՝ արդյունավետ մոնիթորինգի և նախատեսված վարձակալության պայմանագրի դրույթները խստորեն պահպանելու միջոցով):

2. Իրականացնել առաջնահերթ ներդրումներ (օրինակ, ջրաչափման համակարգի բարելավման մասով, և այլն): ՀՀ կառավարությունը համաձայնվել է ՏՀԶԿ այն եզրակացության հետ, որ ջրահեռացման ոլորտը չի ունեցել մեծ գերակայություն և համարժեքորեն չի ֆինանսավորվել: Հետևաբար, ՀՀ կառավարությունը առաջնահերթ կհամարի ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների բարելավումը, մասնավորապես «չսպասարկվող» տարածքներում:

4. Այնուհետև մշակել և կիրառել ջրային ոլորտի ծառայությունների առաջարկվող բարելավումների հետ կապված ծախսերի և օգուտների մասին վկայող տվյալներ, և, ներդրումների առաջնահերթությունները սահմանելու պարզ ծախսերի և օգուտների վերլուծությունների գործիք:

3.2. Համեմատությունն այլ տարբերակների հետ

Դիտարկվել են հետևյալ տարբերակները.

1. Տարբերակ Ա կամ բազային տարբերակ (նախկին քաղաքականության կամ նախկին միջամտությունների շարունակություն), Բազային տարբերակը կամ «սովորականի նման բիզնես» սցենարը ենթադրում է նախկին քաղաքականության կամ միջամտության տարեբարակի շարունակությունը. մասնավորապես, նախկին (ընթացիկ ճաեղքվածքի ծածկման նպատակով) ՋևՋ ընկերության (ընկերությունների) սուբսիդավորումը: Հայաստանի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների լրիվ ծախսածածկման ապահովման մասով եկամտային պահանջները 2014թ. մինչև 2030թ. զգալիորեն աճում են՝ 140%-ով (կայուն գների պայմաններում): Դա պայմանավորված է նրանով, որ պարտքի սպասարկման ծախսերը այդ շրջանում կաճեն ավելի քան 10 անգամ, և քանի որ գոյություն ունեցող գլխավորապես արտոնյալ վարկերի մեծամասնության արտոնյալ ժամկետները սպառվում են (հիմնականում 2015 թվականին): 2030 թվականին պարտքի սպասարկման ծախսերը կկազմեն մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ընդհանուր ծախսերի 48%-ը: Սա կստեղծի ջրամատակարարման ծառայությունների մատչելիության լուրջ խնդիրներ և ճնշում կգործադրի ջրամատակարարման ծառայությունների հանրային ֆինանսավորման աջակցության մասով: Կմեծանա ակտիվների հետագա վատթարացման ռիսկը (այս ոլորտներում գործողությունների բացակայության պարագայում) և նախկին խնդիրները կկրկնվեն: Սա կբերի հետագա վերակառուցման մասով մեծ ծախսերի գոյացման, բարելավված ծառայությունների վերաբերյալ սպառողների գոհունակության անկման և, հետևաբար, սակագների ավելացմանն, որոնք պետք է ուղղվեն ծառայությունների բարելավմանը: Այսպիսով, առկա է բարձր և աճող պետական սուբսիդավորման ռիսկը:

   Նման գործընթացներ ամենայն հավանականությամբ կարող են անընդունելի լինել և՛ դոնորների. և՛ սպառողների համար, որոնք, հնարավոր է, չցանկանան վճարել այդպիսի ծախսերի համար բարձրացված սակագների միջոցով, եթե վստահ չլինեն, որ դրա դիմաց կստանան ավելի լավ ծառայություն:

2. Տարբերակ Բ. Ռազմավարության Տարբերակ Բ-ն բնութագրվում է **տեխնիկական նպատակներին** հասնելու համար նոր և զգալի չափի

ներդրումով՝ հիմնված դրա օգտակարության վերաբերյալ անվերապահ ենթադրության վրա, սակայն առանց այդպիսի ներդրումների տնտեսական հիմնավորվածությունը ցույց տալու: Այս տարբերակի հիմնական բնութագրերը հետևյալն են.

1) Ավելացած կապիտալ ծախսերի փուլային ծրագիր, որը ֆինանսավորվում է սակագնից ստացվող եկամտի և դոնորների վարկերի միջոցով՝ տեխնիկական աջակցության համար տրամադրվող որոշ դրամաշնորհների հետ միասին: 2016թ. մինչև 2030թ. վարկերի չափը մոտավոր կկազմի 279 մլրդ դրամ կամ տարեկան միջինում 18.6 միլիարդ դրամ:
2) Հիմնական շեշտադրումը «սպասարկվող»> տարածքների ջրամատակարարման և ջրահեռացման վրա, մանսավորապես, ոչ եկամտաբեր ջրի (ՈԵՋ) ներկայիս շատ բարձր մակարդակը նվազեցնելու վրա:
3) Ջրաչափման բարելավում:
4) Սակագների ճշգրտումներ (մինչև ամբողջական ծախսածածկման մակարդակ՝ կարճ անցումային շրջանից հետո)՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2014թ. օգոստոսի 14-ի N 883-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի պահանջները
5) Թափանցիկ, թիրախավորված սուբսիդիաներ (այլ ոչ թե՝ անսահմանափակ սուբսիդիաներ, որոնց նպատակն ընթացիկ պակասուրդների ֆինանսավորումն է):

3. Տարբերակ Գ-ն բնութագրվում է հետևյալով.
   1. Ավելի մեծ շեշտադրում **<u>տնտեսական և սոցիալական</u>**, այլ ոչ թե հիմնականում տեխնիկական նպատակների վրա:
   2. Իրատեսական պետական ներդրումներ՝ հաշվի առնելով, որ 15 տարվա վարձակալության վերջում սակագնի մակարդակը ընդունելի կլինի բնակչության համար (քանի որ այս պարամետրերը սերտորեն փոխկապակցված են): 2016թ.-ից մինչև 2031թ. համար ներդրումները մոտավորապես կկազմեն 300 մլրդ դրամ կամ տարեկան միջին հաշվով 20 մլրդ դրամ:
   3. Ներդրումների իմաստով շեշտադրվում է չսպասարկվող տարածքների ՋՄ և ՋՀ:
   4. ՈԵՋ-ի կրճատմանն ուղղված աշխատանքների հաստատում և իրականացում միայն այն դեպքում, եթե հստակ կերպով ցույց է տրվում, որ տնտեսական և ֆինանսական օգուտները զգալիորեն գերազանցում են ծախսերին:
   5. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի հնացած, Խորհրդային ժամանակաշրջանի նախագծային նորմերի բարելավում, քանի որ դրանք հանգեցնում են աշխատանքների ծավալների անհարկի ավելացման, հատկապես՝ գյուղական համայնքներում, ինչպես նաև նման կապիտալ ներդրումների համար չափազանց մեծ ծախսերի:
   6. Միասնական վարձակալին ներկայացվող պահանջ, համաձայն որի նա պետք է հիմնավորի առաջարկվող բոլոր փոխարինման աշխատանքները, հատկապես՝

ստորգետնյա գույքի մասով (ջրատարեր, կոյուղագծեր, ճնշումային խողովակաշարեր):

7. Դոնորների աջակցության ավելի շատ կենտրոնացում ՏՕ ուղղությամբ և ավելի քիչ՝ վերանորոգմանն ուղղված ներդրումների վրա, ինչը հանգեցնում է և՛ գործառնությունների և՛ ներդրումների ավելի բարձր արդյունավետության:

3.1. Ըստ ենթաոլորտների կամ ուղղությունների՝ գերակա ծրագրերը/միջամտությունները

Ակնկալվում է, որ ՋևՋ ոլորտում ներդրումները մեծամասամբ կֆինանսավորվեն միջազգային և երկկողմանի ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի և դրամաշնորհների հաշվին, ինչպես որ եղել է վերջին 10 տարիների ընթացքում: Ստորև բերված են այն վարկային և դրամաշնորհային ծրագրերը, որոնք գործում են սույն ռազմավարության կազմման պահին.

Վարկա-տու/դոնոր	Ծրագիր	Վարկի/դրամաշնորհի գումար	ՀՀ կառավարության համաֆինանսավորում
KfW	Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակա-ռուցվածքների վերա-կանգման ծրագրի երրորդ փուլ	30.0 մլն. Եվրո	6.0 մլն. Եվրո
<u>Իրականացվող աշխատանքների նկարագիր</u> 6 քաղաքների և 37 գյուղերի ՋևՋ համակարգերի հրատապ վերականգնման աշխատանքներ, բաշխիչ ցանցերի վերականգնում, Գյումրի քաղաքի առավել ռիսկային կետերի կոյուղու համակարգի վերականգնում, Վանաձոր, Արմավիր քաղաքների ջրամատակարարման համակարգի նորացում, 3 ջրամբարների կառուցման աշխատանքների որոշ մասի իրականացումը (ԵՆԲ վարկի հետ համատեղ ֆինանասավորում):			

Վարկա-տու/դոնոր	Ծրագիր	Վարկի/դրամա-շնորհի գումար	ՀՀ կառավարության համաֆինանսավորում
ԵՆԲ	Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակա-ռուցվածքների վերա-կանգման ծրագրի երրորդ փուլ	25.5 մլն. Եվրո	5.1 մլն. Եվրո
Իրականացվող աշխատանքների նկարագիր 6 քաղաքների և 37 գյուղերի ՋևՋ համակարգերի հրատապ վերականգնման աշխատանքներ, բաշխիչ ցանցերի վերականգնում, Գյումրի քաղաքի առավել ռիսկային կետերի կոյուղու համակարգի վերականգնում, Վանաձոր, Արմավիր քաղաքների ջրամատակարարման համակարգի նորացում, 3 ջրամբարների կառուցման աշխատանքների որոշ մասի իրականացումը (KFW վարկի հետ համատեղ ֆինանսավորում):			

Վարկա-տու/դոնոր	Ծրագիր	Վարկի/դրամա-շնորհի գումար	ՀՀ կառավարության համաֆինանսավորում
KfW	Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակա-ռուցվածքների վերա-կանգման ծրագրի երրորդ փուլ (դրամաշնորհ)	15.0 մլն. Եվրո	2.4 մլն. Եվրո
Իրականացվող աշխատանքների նկարագիր 560 գյուղական բնակավայրերից որոշ համայնքների ՋՄ և ՋՀ համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների իրականացում, ինչպես նաև՝ Արմավիրի տարածաշրջանում Արմավիր և Մեծամոր քաղաքների ու Նորապատ համայնքի կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում:			

Վարկա-տու/դոնոր	Ծրագիր	Վարկի/դրամա-շնորհի գումար	ՀՀ կառավարության համաֆինանսավորում
ՎԶԵԲ	Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր	5.5 միլիոն եվրո	
Իրականացվող աշխատանքների նկարագիր Երևանի ջրամատակարարման ցանցի բարելավման աշխատանքներ, առանձնատների մոտ անհատական ջրաչափերի փոխարինման, դիտահորերի տեղադրման, մղիչ հնամաշ պոմպերի փոխարինման և այլ աշխատանքների որոշ մասը			

Վարկա-տու/դոնոր	Ծրագիր	Վարկի/դրամա-շնորհի գումար	ՀՀ կառավարության համաֆինանսավորում
ԵՆԲ	Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր	5.5 միլիոն եվրո	
Իրականացվող աշխատանքների նկարագիր Երևանի ջրամատակարարման ցանցի բարելավման աշխատանքներ, առանձնատների մոտ անհատական ջրաչափերի փոխարինման, դիտահորերի տեղադրման, մղիչ հնամաշ պոմպերի փոխարինման և այլ աշխատանքների որոշ մասը (ՎԶԵԲ-ի և ԵՄ Հարևանության ներդրումային Ծրագրի հետ հավասար հիմունքներով ֆինանսավորում)			

Վարկա-տու/դոնոր	Ծրագիր	Վարկի/դրամա-շնորհի գումար	ՀՀ կառավարության համաֆինանսավորում
ԵՄ Հարևանության ծրագիր	Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր	5.5 միլիոն եվրո	

Իրականացվող աշխատանքների նկարագիր Երևանի ջրամատակարարման ցանցի բարելավման աշխատանքներ, առանձնատների մոտ անհատական ջրաչափերի փոխարինման, դիտահորերի տեղադրման, մղիչ հնամաշ պոմպերի փոխարինման և այլ աշխատանքների որոշ մասը (ՎԶԵԲ-ի և ԵՄ Հարևանության ներդրումային Ծրագրի հետ հավասար հիմունքներով ֆինանսավորում) և Ծրագրի աուդիտ, որի համար նախատեսվում է տրամադրել **30.0 հազ. ԱՄՆ դոլար** գումար:

Վարկա-տու/դոնոր	Ծրագիր	Վարկի/դրամա-շնորհի գումար	ՀՀ կառավարության համաֆինանսավորում
ՎԶԵԲ	Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր (դրամաշնորհ)	499 609 եվրո	
Իրականացվող աշխատանքների նկարագիր Աշխատանքների և ապրանքների գնման մրցույթների իրականացումը, պայմանագրերի վերահսկողությունը, ինչպես նաև պայմանագրերի հետ կապված ֆինանսական գործառույթները: Խորհրդատուի ֆինանսավորումը պետք է իրականացվի հատուկ այդ նպատակների համար ներգրավված դրամաշնորհային միջոցների հաշվին:			

5. *Ռազմավարության իրականացման ինստիտուցիոնալ հարցերը*

Համաձայն ՀԶԾ դրույթների՝ ՋևՋ ոլորտի հետագա զարգացման ինստիտուցիոնալ հարցերն ուրվագծվում են հետևյալ կերպ.

1. **Ներդրումային քաղաքականության** թիրախ կհանդիսանա մատուցվող ծառայությունների տևողության[6] ու որակի բարձրացումը և առկա տարածքային անհամաչափությունների մեղմումը: Ներդրումային քաղաքականությունը նաև նպատակաուղղված կլինի խմելու ջրի համակարգերի արդյունավետության

[6] Նախնական գնահատականներով՝ ներդրումների առաջարկվող մակարդակը թույլ կտա ջրամատակարարման շարունակականության միջին հանրապետական ցուցանիշը տարեկան բարձրացնել 0.5 ժամով:

բարձրացմանը՝ ուշադրության կենտրոնում պահելով, հատկապես, ջրի կորուստների նվազեցման խնդիրը: Ջրահեռացման բնագավառում կարևորվում է նաև քաղաքների ու խոշոր բնակավայրերի կոյուղացման համակարգի վերակառուցումը և հեռացվող կեղտաջրերի մաքրման կայանների կառուցումը:

2. **Սակագնային քաղաքականություն:** Սակագնային քաղաքականությունը ծրագրի ժամանակահատվածում ուղղված կլինի սակագների ծախսածածկման մակարդակի աստիճանական բարձրացմանը՝ հաշվի առնելով ամենացածր եկամտային խմբի տնային տնտեսությունների համար մատչելիության հանգամանքը: Կսահմանվի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատչելի սակագնի առավելագույն շեմ[7], որից բարձր սակագնով ծառայությունների մատուցումը աղքատ ընտանիքների համար առաջացած տարբերության չափով կսուբսիդավորվի պետության կողմից:
3. **Կառավարման բարեփոխումներ:** Շարունակվելու են խմելու ջրի բնագավառում իրականացվող կառավարման բարեփոխումները՝ բարձրացնելով մասնավոր հատվածի մասնակցության աստիճանը: Կառավարությունը կխրախուսի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման թույլտվություն ունեցող մասնագիտացված կառույցների սպասարկման տարածքների ընդլայնումը, ինչպես նաև գործող մասնագիտացված կառույցների սպասարկման տարածքներից դուրս մնացած գյուղական համայնք-ներում ջրամատակարարման ծառայություններ մատուցող նոր մասնագիտացված կառույցների ձևավորումը: Այդ նպատակով կիրականացվի երկրի ջրամատակարարման համակարգի, այդ թվում՝ չսպասարկվող գյուղական բնակավայրերի ամբողջական գնահատում:

7 Բնակչության ամենաաղքատ քվինտիլային խմբի սպառողական ծախսերի նկատմամբ՝ 2.5 տոկոս: Հաշվարկային սպառման ծավալը մեկ շնչին՝ օրական 70 լիտր: 2010 թ. գնահատականներով՝ մատչելի հաշվարկային սակագինը կազմել է 190 դրամ /մ^3:

6. *Ռազմավարության ֆինանսավորումը*

5.1. Ֆինանսական կանխատեսումները (ներառյալ բյուջետային, ոչ բյուջետային և դոնորների կողմից ստացվող մուտքերի հաշվին)

Ստորև բերվում է ՋևՋ ոլորտում միջոցառումների հիմնական ուղղությունները, դրանց ծավալների կանխատեսումները՝ ըստ առկա և նախատեսվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի.

Աղյուսակ 2. Առկա ֆինանսավորումն՝ ըստ ծրագրի միջոցառումների, հազ. դրամ

Ծրագրային դասակար-գում			2017թ.	ՄԺԾԾ հայտ		
Ծրագիր	Միջոցառում	Միջոցառման անվանումը	_	2018թ.	2019թ.	2020թ.
1072	ԱՏ01	Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման դրամաշնորհային ծրագրի երրորդ փուլ	2,207,571.1	3,112,575.1	2,863,547.8	-
	ԱՏ02	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ	894,410.0	4,905,213.7	4,325,440.2	5,509,662.6
	ԱՏ03	Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման վարկային ծրագրի երրորդ փուլ	893,440.0	5,167,110.9	4,783,820.8	7,312,703.4
	ԱՏ04	Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր	1,438,176.5	1,743,045.9	1,245,039.8	-
	ԱՏ05	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման	959,811.6	1,538,579.4	1,538,579.4	-

		ծրագիր				
	US06	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր	145,614.8	93,911.4	24,046.4	-
	US07	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր	1,040,346.9	1,547,295.1	513,302.1	-
		Ընդամենը	**7,579,370.9**	**18,107,731.5**	**15,293,776.5**	**12,822,366.0**

5.1. Ճեղքվածքը և ռեսուրսների մոբիլիզացման ռազմավարությունը

Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրային որոշմամբ հաստատված Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարության և ֆինանսավորման ծրագրի՝ գնահատվել են այս ոլորտում անհրաժեշտ ներդրումները 2016թ.-2030թթ. ժամանակահատվածում: Ներդրումների ուղղվածություններն ու բարեփոխումների տրամաբանությունն ամփոփված են երկու տարբերակներում. ա) տեխնիկական ուղղվածություն և նպատակադրումներ, և բ) տնտեսական և սոցիալական նպատակադրումներ: Ընդհանուր առմամբ, երկու տարբերակների դեպքում անհրաժեշտ ներդրումների ընդհանուր գնահատվող ծավալներն էականորեն չեն տարբերվում միմյանցից (279-300 մլրդ դրամ ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, կամ տարեկան 18-20 մլրդ դրամ) և էականորեն գերազանցում են առկա կամ բացահայտված ներդրումների կանխատեսումները:

Աղյուսակ 3. Ներդրումների բաշխումը Տարբերակ Բ-ի դեպքում, 2016թ.-2030թ., մլրդ դրամ

	ՋՄ	Ընդհանուրի %	ՋՀ	Ընդհանուրի %	Ընդհանուր
Սպասարկող	114.5	41%	134.0	48%	248.6
Չսպասարկվող	30.4	11%	0.0	0%	30.4
Ընդամենը	**145.0**	**52%**	**134.0**	**48%**	**279.0**

Աղյուսակ 4. Ներդրումների բաշխումը Տարբերակ Գ-ի դեպքում, 2016թ.-2031թ., մլրդ դրամ

Սպասարկվող տարածքների ՋՄ	**92**	30.7%
Սպասարկվող տարածքների ՋՀ	**75**	25.0%
Չսպասարկվող տարածքների ՋՄ	**92**	30.7%
Չսպասարկվող տարածքների ՋՀ	**41**	11.7%
Ընդամենը	**300**	**100.0%**

Նախատեսվում է, որ հիմնականում ներդրումները կֆինանսավորվեն նոր ներգրավվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին:

5.2. Ծրագրի ամբողջական արժեքը (ընթացիկ և կապիտալ)՝ և հիմնական առաջնահերթ ծրագրերի գծով ծախսերի կանխատեսումները

Ըստ էության, սկսած 2017թ. ՋևՋ ոլորտում իրականացվող ծախսերը կլինեն ներդրումներ՝ կապիտալ ծախսեր, չնայած այն բանին, որ բյուջեի տնտեսագիտական դասակարգմամբ խորհրդատվական ծառայությունները համարվում են ընթացիկ ծախսեր/միջոցառումներ: Այդուհանդերձ, քանի որ նշված խորհրդատվական ծառայություններն անմիջականորեն կապված են բուն վերականգնման աշխատանքների հետ, սույն ռազմավարության իմաստով նպատակահարմար է

դրանք դիտարկել որպես ներդրումների կամ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների բաղկացուցիչ մաս: Այսպիսով, այսուհետ ՋևՋ ոլորտում իրականացվելիք պետական միջամտությունները կկրեն բացառապես կապիտալ բնույթ: Բացառություն կկազմեն միայն բնակչության խոցելի խավի համար մատչելիության սահմանը գերազանցող սակագների դեպում տրամադրվող թիրախային փոխհատուցումները/սուբսիդիաները, եթե այդպիսիք կիրառվեն:

5.3. Ոլորտի ֆինանսական ծրագրի կապը ավելի բարձր մակարդակի ռազմավարական ծրագրի և միջնաժամկետ ծախսային ծրագրերի հետ

Սույն ռազմավարությունը հիմնվում է բարձր մակարդակի հետևյալ ռազմավարական ծրագրերի վրա.

i. 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ծրագիր
ii. ՀՀ կառավարության 2015թ. օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրային որոշմամբ հաստատված «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարություն և ֆինանսավորման ծրագիր»
iii. 2018-2020թթ. Միջնաժամկետ ծախսերի ծրագիր:

7. *Ռազմավարության մոնիտորինգը և գնահատումը*

6.1. Ծրագրերի գծով ռեսուրսների և արդյունքային ցուցանիշների սահմանումը

Հիմք ընդունելով 5.4. բաժնում նշված ռազմավարական փաստաթղթերում ամրագրված նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև պետական քաղաքականության այլ փաստաթղթերն այս ոլորտում՝ «1072 Աջակցություն ՋևՋ ոլորտի ծառայություններին» պետական բյուջետային ծրագրի հիմնական նպատակն է ապահովել ՋևՋ ծառայությունների մատչելիությունը բնակչության համար՝ ապահովելով այդ ծառայությունների պատշաճ որակը: Հաշվի առնելով 5.4.ii. կետում

նշված փաստաթղթում ներկայացված վերլուծությունները և դրա հիման վրա մշակված քայլերի առաջնահերթությունները (տես սույն ռազմավարության Բաժին 3.3.-ը)՝ նշված նպատակին հասնելու առաջնային տարբերակը համակարգի ներկայիս կորուստների կրճատումն է, ինչին և մեծամասամբ ուղղվելու են ոլորտում իրականացվելիք ներդրումները: 2016թ. տարեկան կորուստները կազմել են 74.8%[8]. Այս կորուստներն իրենցից ներկայացնում են Ոչ-եկամտաբեր ջրի գերակշիռ մասը: Այդ իսկ պատճառով, կորուստների կրճատումն անմիջականորեն կհանգեցնի ՋևՋ ծառայությունների ծախսերի կրճատման, հետևաբար նաև, հնարավորություն կստեղծի ՋևՋ մատակարարներին ավելի արդյունավետ գործել սակագների համեմատաբար ցածր մակարդակի պայմաններում:

Ստորև բերվում է սույն ռազմավարությամբ 1072 ծրագրի համար ծրագրային բյուջետավորման նպատակներով բերվող վերջնական արդյունքի ցուցանիշի նկարագրությունը և թիրախային արժեքները՝ հիմնված Վարձակալության պայմանագրի Հավելված 6-ի դրույթների վրա:

Ծրագրի վերջնական արդյունք՝ Ջրամատակարարման կորուստների կրճատում

Ցուցանիշ՝ **ՀԿՑ CF1՝ Չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)**[9]

ՀԿՑ CF1-ի հաշվարկման մեթոդաբանությունը (Չհաշվառվող ջուր՝ ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)

ՀԿՑ CF1՝ Չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)
Նկարագիր՝ Չհաշվառվող ջուրը (ՉՋ) ջրի այն մասնաբաժինն է, որն արտադրվել է,

[8] Աղբյուրը՝ ՀԾԿՀ կայքում հրապարակված ջրամատակարարման և ջրահեռացման հաշվեկշռի՝ http://www.psrc.am/images/docs/reports/water/2016/4-er/xmelu-jur-xoranard-IV.pdf: Ներառում է միայն «սպասարկվող» տարածքները (նախկին, Երևան Ջուր, Հայջրմուղկոյուղի, Նոր ակունք, Շիրակ ջրմուղ-կոյուղի և Լոռի ջրմուղ-կոյուղի ընկերությունների սպասարկման տարածքները):

[9] Ըստ Վարձակալության պայմանագրի

ՀԿՑ CF1՝ Չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)

բայց կորել է նախքան վերջնական Բաժանորդներին հասնելը:

Առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառումը գրանցված Բաժանորդների կողմից առանց ջրաչափերի հաշվառած ամբողջ ջրի սպառումն է՝ ըստ հաշվարկների և/կամ սահմանված նորմերի՝ համաձայն Կիրառվող օրենսդրության:

Հաշվարկման մեթոդ՝

ՉՋ = (Համակարգի մուտքի ծավալ – Ջրաչափերով գրանցված ջրի սպառում)*100%/ Համակարգի մուտքի ծավալ – Ջրաչափերով գրանցված ջրի սպառում

Ելակետային արժեքներ (ԵԱ). Ելակետային արժեքները սահմանվում են Վարձակալի կողմից՝ հիմք ընդունելով Բազիսային տարվա ժամանկահատվածում գրանցված հասանելի տվյալները և տեղեկատվությունը: Այնուհետև, Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է ստուգի, հաստատի և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտի ելակետային արժեքը: Ելակետային արժեքները պետք է կլորացնել մինչև մեկ տասնորդական:

Նորմալ Գործող Ստանդարտ (ՆԳՍ) և Վատ Կատարողական մակարդակ (ՎԿՄ): ՆԳՍ-ը և ՎԿՄ-ը կախված են համապատասխան ելակետային արժեքներից (ԵԱ): Առանձին պայմանագրային տարվա ՎԿՄ-ը կախված է տվյալ պայմանագրային տարվա ՆԳՍ-ից, բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից: ՆԳՍ-ը և ՎԿՄ-ը պետք է կլորացնել մինչև մեկ տասնորդական:

	ՊՏ 1	**ՊՏ 2**	**ՊՏ 3**	**ՊՏ 4**	**ՊՏ 5**	**ՊՏ 6**	**ՊՏ 7**	**ՊՏ 8**
ՎԿՄ	-	ԵԱ	ԵԱ	ԵԱ	ԵԱ – 2%	ԵԱ – 4%	ԵԱ – 6%	ԵԱ – 8%
ՆԳՍ	-	ԵԱ – 3%	ԵԱ – 6%	ԵԱ – 9%	ԵԱ – 12%	ԵԱ – 14%	ԵԱ – 16%	ԵԱ – 18%

ՀԿՑ CF1՝ Չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)							
	ՊՏ 9	**ՊՏ 10**	**ՊՏ 11**	**ՊՏ 12**	**ՊՏ 13**	**ՊՏ 14**	**ՊՏ 15**
ՎԿՄ	ԵԱ – 10%	ԵԱ – 12%	ԵԱ – 14%	ԵԱ – 16%	ԵԱ – 18%	ԵԱ – 19%	ԵԱ – 20%
ՆԳՍ	ԵԱ – 20%	ԵԱ – 22%	ԵԱ – 24%	ԵԱ – 26%	ԵԱ – 28%	ԵԱ – 29%	ԵԱ – 30%
ՀԿՑ CF1-ի ՎԿՄ-ի նվազագույն արժեքը 55% է **ՀԿՑ CF1-ի ՆԳՍ-ի նվազագույն արժեքը 45% է**							
Այլ մանրամասներ. Սույն ցուցանիշի հետ կապված այլ մանրամասներ ներկայացված են Վարձակալության պայմանագրի Հավելած 6-ի Աղյուսակ 6-3-ում							
Հաշվետվությունների ներկայացման հաճախականությունը. Բյուջետային նպատակներով սույն ցուցանիշի գծով հաշվետվությունները պետք է ներկայացվեն եռամսյակային կտրվածքով՝ տարվա ընթացքում աճողական:							

Ծրագրի ներքո ներառված (ներդրումային) միջոցառումների ազդեցությունը ՋևՋ ծառայությունների արդյունքային (output) ցուցանիշների վրա

Սույն ծրագրի (1072) ներքո պետական միջամտություններն հիմնականում կազդեն ՋևՋ ոլորտում մատուցվող ծառայությունների որակական ցուցանիշների վրա, որոնք կչափվեն հետևյալ ցուցանիշների փոփոխության միջոցով (ըստ Վարձակալության պայմանագրի դրույթների).

I. ՀԿՑ QS1՝ Ջրամատակարարմանշարունակականությունը քաղաքային, գյուղական տարածքներում և Երևան քաղաքում

ՀԿՑ QS1-ի չափումը սահմանվում է 2014թ.-ի օգոստոսի 14-ի Ն883-Ն Կառավարության որոշման համաձայն: ՀԿՑ QS1-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Վարձակալության պայմանագրի Հավելված 6-ի Աղյուսակ 6-1-ում: Ստորև բերվում է նշված ցուցանիշի սահմանումը և ներկայացման կտրվածքը: Սույն ցուցանիշի հետ կապված հաշվարկման մեթոբանության, թիրախների և այլ մանրամասների համար անհրաժեշտ է հիմնվել Վարձակալության պայմանագրի դրույթների վրա:

ՀԿՑ QS1՝ Ջրամատակարարման շարունակականությունը Երևան քաղաքում, քաղաքային և գյուղական բնակավայրերում
Սահմանում՝ Պայմանագրային տարվա ընթացքում օրական միջին չափված ժամերի քանակն է՝ կշռված ըստ բաժանորդների թվաքանակի, որի ընթացքում ջուրը մատակարարվել է՝ հիմք ընդունելով ծորակի մոտ ջուր ստացող բաժանորդների թվաքանակը՝ յուրաքանչյուր չափման միջև ընդմիջումների ընթացքում (չափման ինտերվալում): Այս ցուցանիշը պետք է չափվի առանձին՝ 1. Երևան քաղաքի կտրվածքով, 2. Վարձակալության պայմանագրի ՀԱՎԵԼՎԱԾ 5- ում նշված սպասարկման տարածքի այլ քաղաքային տարածքներում, 3. Վարձակալության պայմանագրի ՀԱՎԵԼՎԱԾ 5- ում նշված սպասարկման տարածքի գյուղական տարածքներում:
Հաշվետվությունների ներկայացման հաճախականությունը. Բյուջետային նպատակներով սույն ցուցանիշի գծով հաշվետվությունները պետք է ներկայացվեն եռամսյակային կտրվածքով՝ տարվա ընթացքում աճողական:

II. ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը

ՀԿՑ QS2-ի չափումը սահմանվում է 2014թ.-ի օգոստոսի 14-ի Ն883-Ն Կառավարության որոշման համաձայն: ՀԿՑ QS2-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Վարձակալության պայմանագրի Աղյուսակ 6-2-ում: Ստորև բերվում է նշված ցուցանիշի սահմանումը և

ներկայացման կտրվածքը: Սույն ցուցանիշի հետ կապված հաշվարկման մեթոդաբանության, թիրախների և այլ մանրամասների համար անհրաժեշտ է հիմնվել Վարձակալության պայմանագրի դրույթների վրա:

ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը
Նկարագիր՝ QS2–ը պետք է պարզի կիրառելի ստանդարտին համապատասխանող ընտրված պարամետրերի համար իրականացված թեստերի տոկոսային հարաբերությունը Պայմանագրային տարվա ընթացքում անհրաժեշտ թվով թեստերի համեմատ:
Սահմանումներ՝ *Գործող ստանդարտ*– Գործող Ստանդարտը Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող ջրի որակի ստանդարտն է կամ նորմը պայմանագրի ստորագրման օրվանից: *Նմուշառման կետեր* – Վարձակալի կողմից մշակվող ջրի որակի մոնիտորինգի պլանի և ռազմավարության մեջ Վարձակալը պետք է առաջարկի օրական կտրվածքով նմուշառվող նմուշառման կետերի թիվը և տեղակայման վայրերը: Այդ վայրերը պետք է ներառեն առնվազն ջրամբարներ, էլեկտրահաղորդման լարեր, հասարակական ծորակներ և Բաժանորդի տարածքում տեղակայված ծորակներ: Վարձակալի առաջարկությունը պետք է ստուգվի և հաստատվի Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից: *Նմուշառման Հաճախականությունը* –Վարձակալը պետք է նմուշառնի բոլոր նմուշառման կետերը օրական կտրվածքով: Վարձակալը պետք է փաստագրի նմուշները համապատասխան արձանագրություններում առնվազն նշելով՝ • Նմուշառման օրը, ժամը, վայրը և • Նմուշառմանը մասնակցած անձանց կազմը:

6.2. Մոնիտորինգի և գնահատման մեխանիզմները

Սույն ռազմավարության մոնիտորինգի և գնահատման մեխանիզմը հիմնվում է «Երևան Ջուր, Հայջրմուղկոյուղի, Լոռի-ջրմուղկոյուղի, Շիրակ-ջրմուղկոյուղի և Նոր Ակունք ՓԲԸ-ների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի Վարձակալության պայմանագրով» նախատեսված հիմնական

կատարողական ցուցանիշների (ՀԿՑ) համակարգի[10] վրա: Հիմնական տրամաբանությունն այն է, որ նշված պայմանագրով նախատեսված ՀԿՑ-ների բարելավումները հաշվարկվել են հաշվի առնելով նախատեսվող ներդրումների ազդեցությունները ՀԿՑ-ների վրա: Հետևաբար, ներդրումների տեսքով ՋևՋ ոլորտում իրականացվող պետական միջամտությունների հիմնավորումները պայմանագրով նախատեսվող ՀԿՑ-ների բարելավումներն են, այդ իսկ պատճառով պետական միջամտության թիրախավորումները պետք է համընկնեն պայմանագրով նախատեսված ՀԿՑ-ների թիրախների հետ:

[10] «Երևան Ջուր, Հայջրմուղկոյուղի, Լոռի-ջրմուղկոյուղի, Շիրակ-ջրմուղկոյուղի և Նոր Ակունք ՓԲԸ-ների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի Վարձակալության պայմանագրի» Հավելված 6 (Կատարողական չափանիշներ, որակի նկատմամբ պահանջներ և տուժանքներ)